# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

ՀՊ-ԷԱՃԱՊՁԲ-05/24 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 23 հունվարի 2024թ., ժամը 12:00

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Վարդանյան Գևորգ | -Արարողակարգի և փաստաթղթաշրջանառության վարչության պետ հանձնաժողովի նախագահ |
| Զոհրաբյան Գոհար | -Ֆինանսատնտեսական վարչության ֆինանսական բաժնի պետ |
| Պետոյան Ռուզան | -Անձնակազմի կառավարման բաժնի գլխավոր մասնագետ |
| Բեդիրյան Ծովինար | -Ֆինանսատնտեսական վարչության ֆինանսական բաժնի գլխավոր մասնագետ |

Հանձնաժողովի քարտուղար Աննա Անանյան

## 1. Տվյալներ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

Գնահատող հանձնաժողովն ուսումնասիրելով ՔՈՄՓ ՊՐՈ ՍՊԸ-ի կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի շտկված ամբողջական նկարագիրը և ընկերության տնօրենից էլեկտրոնային փոստով ստացված նամակը, ըստ որի նախատեսվում է ներկայացնել այլ կազմակերպության անունով տրված MAF (Manufacturer authorization form) հավաստագիր՝ արձանագրեց, որ

ա/ 1-ին չափաբաժնի մասով ՔՈՄՓ ՊՐՈ ՍՊԸ-ի կողմից նեկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին, **սակայն այլ կազմակերպության անունով տրված հավաստագրի ներկայացումը չի կարող ընդունելի համարվել, հաշվի առնելով, որ այդ դեպքում իմաստազուրկ է դառնում այդ փաստաթուղթը և դրա պահանջի հիմքում դրված սպասումները,**

բ/ մասնակիցը մասնագիտական տեսակետ է արտահայտել, որ կարիքի բավարարման համար նկարագրված տեխնիկական բնութագրին հայաստանյան շուկայում մեկ մոդելի առաջարկ է համապատասխանում: Այդ տեսակետին հակադրելու փաստարկներ հանձնաժողովը չգտավ, հաշվի առնելով, որ աճուրդի մյուս մասնակիցների կողմից տրված առաջարկներում էլ (այն դեպքերում երբ մոդելը նշվել էր) միայն մեկ մոդել էր ներկայացվել, որի գնային առաջարկը գերազանցում էր նախահաշվային գնին:

**Հանձնաժողովը որոշեց՝**

1. Հիմք ընդունելով սույն արձանագրության 1 կետը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ ՀՊ-ԷԱՃԱՊՁԲ-05/24 ծածկագրով ընթացակարգը 1-ին չափաբաժնի մասով հայտարարել չկայացած:

2. Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետով՝ ՏԵԽՆՈՖՈՐՈՒՄ ՍՊԸ-ին 2-րդ չափաբաժնի մասով հայտարարել ընտրված մասնակից և ներկայացնել առաջարկ՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պայմանագիր կնքելու համար:

**Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:**

**Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները և ստորագրությունները.**

| | | |
|---|---|---|
| Վարդանյան Գևորգ | _____ | հանձնաժողովի նախագահ |
| Զոհրաբյան Գոհար | _____ | |
| Պետոյան Ռուզան | _____ | |
| Բեդիրյան Ծովինար | _____ | |

Հանձնաժողովի քարտուղար _____ Աննա Անանյան